

ԱՐԹՈՒՐ ԱԴԱՄՈՎԸ ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

ԱՐԾՎԻ ԲԱԽԶԻՆՅԱՆ

Քանայի բառեր՝ Արթուր Ադամով, ֆրանսիական գրականություն և թափրոն, Եկապերինա Բահաթուր, ռուսահայ վարարանդիներ Ֆրանսիայում, Աննա Բուդաղյան, Ռուբեն Զարյան:

Ամփոփում

Հայազգի ֆրանսիացի գրող Արթուր Ադամովը (Հարություն Ադամյան, 1908–1970) աբսուրդի թատերգության հիմնադիրներից է, ֆրանսիական հետպատերազմյան թատրոնի կարևորագույն ներկայացուցիչներից, նորարար թատերագիր, թատերագրության նոր լեզվի ստեղծող: Կիսովոլոսկում (Ռուսաստան) ծնված և մանկուց Եվրոպայում բնակված Ադամովը, չնայած հեռու է եղել հայ իրականությունից, սակայն հայության հետ ունեցել է որոշակի առնչություններ: Քանի որ գտարյուն հայ էր, առաջին լեզուն եղել է հայերենը, և նա մկրտվել է Հայ Առաքելական Եկեղեցում: Նրա տատը՝ Եկատերինա Բահաթուրը, եղել է առաջին հայ կին թատերագիրը: Ֆրանսիայում Ադամովը դիպվածաբար առնչվել է հայերի հետ՝ իր առաջին գրական փորձերը ցույց է տվել Ավետիք Իսահակյանին, մի քանի հայ մտավորականների հետ (բեմադրիչ Աննա Բուդաղյան, արվեստաբան Ռուբեն Զարյան, գրող Սերովբե Մխիթարյան, կինոգործիչ Նուբար Թիլդյան) ունեցած զրույցներում խոսել է իր հայկական աղերսների մասին և արտահայտել կարծիքներ հայ իրականության տարբեր երևույթների վերաբերյալ:

Նախաբան

«Ծանոթ հայկական դեմք է, թվում է՝ Երևանի փողոցներում ես տեսել նրան. խիտ, կոշտ հոնքեր, կրքոտ, լայնաշուրթ բերան, իսկ աչքերում թախիժ, այնքան հարազատ ու միևնույն ժամանակ մի փոքր անսովոր, ասես հարձակման պատրաստ թախիժ, զինված վահանի պես բարձր ճակատով ...»¹, – այսպես է սկսել

* Ներկայացվել է 05. IV. 2026 թ., գրախոսվել է 17. IV. 2026 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2026 թ.:

© Հեղինակ/ներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

¹ Ն եր ս ի ս յ ա ն. 1962, № 10, 46: Հետագայում խորհրդահայ մամուլում Ադամովի մասին գրել է Ռուբեն Զարյանը (Զ ա ռ յ ա ն. 2012), հարցազրույց է վարել Նուբար Թիլդյանը (Թ ի լ դ յ ա ն. 1967, № 8, 32–34), իսկ առաջին անգամ աբսուրդի թատրոնի մասին հոդվածով և Ադամովին անդրադարձով հանդես է եկել բանասեր,

գրականագետ Լևոն Ներսիսյանը Արթուր Ադամովի մասին 1962-ին հրատարակած հոդվածը, որը Հայաստանում թատերագրի մասին լույս տեսած առաջին նյութն է:

Արթուր Ադամովը (1908–1970), որ իռլանդացի Սեմյուել Բեքթթի և ռումինացի էժեն Իոնեսկոյի հետ համարվում է ֆրանսիական գրականության մեջ արևմտյան թատերագրության ու արևմտյան թատրոնի հիմնադիրը², ֆրանսիական հետպատերազմյան թատրոնի կարևորագույն ներկայացուցիչներից է, նորարար թատերագիր, թատերագրության նոր լեզվի ստեղծող:

1914 թ. Ադամովն ընտանիքի հետ մեկնել է Ռուսաստանից և բնակվել Գերմանիայում, ապա՝ Շվեյցարիայում: 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջման ընթացքում ընտանիքը կրել է ֆինանսական ծանր կորուստներ, իսկ խաղամուկ հայրը 1933-ին ինքնասպան է եղել: 1924-ից Ադամովները հաստատվել են Փարիզում, որտեղ Արթուր վերանվանված Հարությունը հետագայում շփվել է սյուրռեալիստների հետ և գրել իր առաջին պիեսը՝ «Տաք մահը»: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Փարիզի բռնազավթումից հետո ապաստանել է Մարսելում, սակայն 1941 թվականին ձերբակալվել է Վիշիի կառավարության դեմ «թշնամական հայտարարություններ» կատարելու մեղադրանքով և վեց ամիս պահվել Ֆրանսիայի Արժեք-սյուր-Մեր համակենտրոնացման ճամբարում: 1950–60-ականներին միացել է կոմունիստներին և ակտիվ մասնակցել հակապատերազմական շարժումներին: Գրել է բանաստեղծություններ, թատերախաղեր («Պարոդիա», «Վերագտնում», «Եթե ամառը վերադառնար», «Ներխուժում», «Մեծ և փոքր մանկում», «Պրոֆեսոր Տարանը», «Պաուլ-Պաուլ», «Պինգ-Պոնգ», «Յոթնասունմեկի գարունը», «Թափափուկների քաղաքականությունը»), «Սուկալի օրագիրը», «Խոստովանություն» ու «Մարդը և երեխան» արձակ ստեղծագործությունները: Պիեսի է վերածել ռուս գրող Նիկոլայ Գոգոլի «Մեռած հոգիները», զբաղվել է նաև թարգմանություններով՝ գերմաներենից և ռուսերենից ֆրանսերեն: Նրա թատրոնը սկզբում կապված է եղել սյուրռեալիզմի և արևմտյան թատրոնի հետ, ապա գերմանացի թատերագիր Բեռթոլդ Բրեխթի ազդեցությամբ դարձել է ավելի քաղաքական: Ֆինանսական և առողջական խնդիրների պատճառով տառապել է ակոհոլիզմով ու ընկճախտով: Եղել է Ֆրանսիայի գրողների ազգային կոմիտեի անդամ:

Մանկության և պատանեկության տարիներ. առնչություններ հայերի հետ

Ադամովը ռուսահայերի զավակ էր, ինչն էլ պայմանավորել է նրա եռյակ ինքնությունը, որի մեջ ամենից թույլը հայկականն էր: Հայ միջավայրում երբեք չեղած, ռուսական ազգանվամբ ու ֆրանսերեն գրող Ադամովը, սակայն, ունեցել է որոշակի առնչություններ հայ իրականությանը և հայերին: Ի տարբերություն, օրինակ, ռուսական տարագիր հայազգի այլ գրողների (Նինա Բերբերովա, Անրի

թարգմանիչ, գրադարանագետ Պերմ Թյուրաբյանը (տե՛ս Թյուրաբյան. 1983, № 3, 74–76):

² Ադամովն իր ինքնակենսագրության մեջ գրել է. «1954 թվական: Տևական ժամանակ էր արդեն, որ քննադատներն իմ անունը կապում էին Բեկետի և Իոնեսկոյի անուններին: Երեքս էլ օտար ծագում ունեինք, երեքս էլ խախտել էինք հին բուրժուական թատրոնի անդորրը» (Ադամով. 2026, 108):

Թրուայա) նա եղել է զտարյուն հայ՝ շուշեցիներ Սուրեն Ադամյանի (Ադամյանց)³ և Լույս Բահաթուրովայի (Բահաթուրյան) զավակն ու մկրտվել է Հայ Առաքելական Եկեղեցում որպես Հարություն Ադամյան: Վաղ մանկության տարիներին այցելել է իր բնօրրան Շուշի: 1963-ին արվեստաբան Ռուբեն Զարյանի հետ ունեցած զրույցում ասել է. «Շատ աղոտ հիշում եմ Շուշին: Ես շուշեցի եմ, այսինքն՝ ծնողներիս կողմից, իսկ ինքս ծնվել եմ Կիսլովոդսկում»⁴: Ենթադրում ենք, որ այս նույն գերդաստանին են պատկանել ականավոր գյուտարար Հովհաննես Ադամյանը, նրա եղբայրը՝ երաժշտագետ Արշակ Ադամյանը, դաշնակահարուհի քույրերը՝ Հեղինե և Եվգինե Ադամյանները, նաև հայազգի ռուս գրող Նորա Ադամյանը: Թատերագրի հորեղբոր՝ պետական ծառայող Վարդան Ադամյանցի դուստրը՝ Իդա Ադամովը (Անահիտ Ադամյանց, 1910, Մոսկվա – 1993, Փարիզ) 1930-ականներին եղել է Ֆրանսիայի հայտնի թենիսիստուհիներից մեկը. Ադամովը նրան հիշել է իր ինքնակենսագրության մեջ. «Հայտնությունն իմ զարմուհի Իդայի, որը հետագայում կդառնա Ֆրանսիայի թենիսի չեմպիոն ու կամուսնանա Կլոդ Բուրդեի (ֆրանսիացի ճանաչված գրող – Ա. Բ.) հետ»⁵:

Ռուսախոս ընտանիքի զավակ Հարությունը (որին Արտյուշա են անվանել)՝ ծնված օտար երկրում, ընդամենը վեց տարեկան է եղել, երբ ծնողները իր և քրոջ՝ Արմիկի⁶ հետ տեղափոխվել են Եվրոպա, վերջնականապես հաստատվել են Փարիզում, քանի որ անկարելի է դարձել վերադարձը («Կարմիր բանակը ներխուժում է Կովկաս: Մեր նավթահորերը ազգայնացվում են»⁷): Ընտանիքը որոշ կապեր է ունեցել տեղի հայ համայնքների հետ, պատահական չէ, որ իր ինքնակենսագրության մեջ, նշելով մանկության տարբեր հանգրվանները, Ադամովը հիշել է նաև «Ժնևի փոքր, հայկական գետտոն»⁸:

Հետաքրքրական է, որ չնայած թե՛ Ադամովն ինքը, թե՛ իր ժամանակակիցները մշտապես վկայել են, որ հայերեն չի իմացել, սակայն իր «Մարդը և երեխան» ինքնակենսագրական վեպում նա գրել է. «Պատմում են նաև, որ նորածին հասակում հայերեն ինչ-որ բան էի կակազում՝ «ընգա», ասել է թե՛ այս ի՞նչ ծակն եմ ընկել: Մոռացա նշել, որ ընտանիքս հայկական արմատներ ունի: Ես նույնիսկ ինչ-որ ժամանակ այդ լեզվով եմ խոսել»⁹: Հավանաբար, խոսքը վերաբերում է վաղ մանկությանը, Կիսլովոդսկում անցկացրած տարիներին, և օգտագործած

³ Սուրեն Ադամովի եղբայրներից երկուսը կովել են սպիտակգվարդիականների շարքերում և զոհվել, իսկ մեկը 1916-ին թղթախաղում կորցրել է իր նավթահորերը և հետագայում գնացել է Շվեյցարիա՝ հարազատներից օգնություն խնդրելու (տե՛ս Ա դ ա մ ո վ. 2026, 22):

⁴ Զ ա ղ յ ա ն. 2012, հ. 3, 333:

⁵ Ա դ ա մ ո վ. 2026, 25:

⁶ Արմիկն ամուսնացել է ռուս Ստեպանովի հետ: Քրոջն Ադամովը երկու անգամ է հիշատակել իր ինքնակենսագրության մեջ, որից երկրորդ անգամը՝ որպես իր մտերիմ (տե՛ս Ա դ ա մ ո վ. 2026, 93, 201): Ի դեպ, Արմիկի մասին նրա տատը 1933-ի մարտի 13-ին Աննա Բուդաղյանին հղած նամակում գրել է. «Գեղեցկուհի Արմիկը: Ի՞նչ անհաջող դասավորվեց նրա բախտը» (ԳԱԹ, Աննա Բուդաղյանի ֆոնդ, № 41–III, 14):

⁷ Ա դ ա մ ո վ. 2026, 21:

⁸ Ա դ ա մ ո վ. 2026, 20:

⁹ Ա դ ա մ ո վ. 2026, 16:

լեզուն, թերևս, եղել է Արցախի բարբառը: Նա ունեցել է երկու դաստիարակչուհի՝ ֆրանսուհի և հայուհի¹⁰:

Ադամովներին, հազարավոր ռուսաստանցի վտարանդիների պես, բաժին են ընկել տարագրության հետ կապված բոլոր դժվարությունները: Ավետիք Իսահակյանը 1926-ին Փարիզից գրած երկու նամակում հետևյալն է ասել երբեմնի հարուստ ռուսահայ վտարանդիների, նրանց մեջ և՛ Սուրեն Ադամյանի ընտանիքի մասին. «Բոլորի կանայք կար են անում. Ասրի-Բեկյանի, Սուրենի, նույնիսկ իշխ. Արդուբյանի»¹¹ ու նաև՝ «Սուրեն Ադամյանի կինը կարում է»¹²: Իսկ Իսահակյանի որդին՝ Վիգեն Իսահակյանը, հիշել է, որ Ադամովի հայրը՝ Սուրենը, Բաքվի հարուստ նավթարդյունաբերողներից էր, ռուսական հեղափոխության օրերին թողել էր Բաքվում իր ունեցվածքը և հանգրվանել Ժնևում՝ սպասելով, թե ամեն ինչ կհանդարտվի և ինքը կվերադառնա՝ տեր կանգնելու իր հարստությանը: Սակայն հույսերը չեն իրականացել, և նա ինքնասպանություն է գործել: «Մեր ծանոթության տարիներին Արթուրը նիհար ու բարձրահասակ դպրոցական էր, ինձնից 4-5 տարով մեծ: Նա նայում էր ինձ որպես երեխայի և իր, այլևս ավելորդ խաղալիքներն ինձ էր նվիրում: Նա գերազանց խոսում էր ֆրանսերեն ու ռուսերեն, սակայն հայերեն չգիտեր: Կարդում էր ամբողջ օրը, ոտանավորներ էր գրում ֆրանսերեն, ցույց տալիս հորս՝ կարծիքն իմանալու: Այդ գրվածքները հեռու էին հորս ճաշակից, սակայն Արթուրի մեջ նշմարում էր տաղանդի առկայությունը: Ուստիև խորհուրդ տվեց դպրոցն ավարտելուց հետո գնալ Փարիզ՝ սովորելու և շարունակելու գրելը: 15 տարի անց Արթուրին տեսա Փարիզում: Նա արդեն ճանաչված գրող էր, որի պիեսները մեծ հաջողությամբ բեմադրվում էին Եվրոպայի թատրոններում: Սակայն, չնայած գրական հաջողություններին և բարեկեցիկ վիճակին, Արթուրը չկարողացավ ազատվել հոռետես մտքերից և թմրեցուցիչ դեղերի ազդեցության ներքո, հետևելով հոր օրինակին, վերջ տվեց կյանքին: Սա 60-ական թվականներին էր (իրականում՝ 1970-ին – Ա. Բ.), լուրը ինձ հասավ Երևանում»¹³:

Թատերագրական «գեներ». Եկատերինա Բահաթուր

Անցյալի հայագի հեղինակների համար անսովոր էր ունենալ նախնի, այն էլ՝ իգական գծով, որ նույնպես լինել ստեղծագործող: Ադամովն այդ սակավաթիվ հայերից է: Նրա մայրական տատը՝ Եկատերինա Բահաթուրը (1870-1944), հայագիր գրող էր, առաջին հայ կին թատերագիրը, ուստիև սխալված չենք լինի՝ ասելով, որ Ադամովը գրական ձիրքը ժառանգել է տատից: Վերջինս ծնվել էր Արցախի Խանքենդ գյուղում (հետագայում՝ Ստեփանակերտ), ուսանել Շուշիի ռուսական, ապա՝ Մարիամյան դպրոցներում: 1900 թ. տեղափոխվել է Բաքու, այնուհետև բնակվել է Թիֆլիսում, մահացել Երևանում: 1905 թ. «Մուրճ» ամսագրում լույս է տեսել Բահաթուրի «Մռայլ օրեր» առաջին ակնարկը: Հետագայում գրել է դրամատիկական գործեր՝ «Կամքի եղերերգը», «Արա և Շամիրամ» (1915),

¹⁰ Ա դ ա մ ո վ. 2026, 17:

¹¹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1979, 220:

¹² Ի ս ա հ ա կ յ ա ն. 1979, 224:

¹³ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2000, 53-54:

«Արտավազը» (1923, բեմադրվել է Ալեքսանդրապոլում, Բաքվում, Թիֆլիսում), «Դիվան» (բեմադրվել է 1930-ին, Թիֆլիսում) և «Թոնդրակեցիներ»։ Ե. Բահաթյունը մշտապես հետաքրքրվել է թոռներով, որի վկայությունն են Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (ԳԱԹ) գտնվող տասնյակ այն նամակները, որ թատերագրուհին գրել է Փարիզում ապրող իր մտերիմ ընկերուհուն՝ Աննա Բուդաղյանին (1880–1964)։ Նրան հատկապես հուզել է իր սիրելի Արտյուշայի ճակատագիրը, որին շատ քիչ է տեսել և որի գրական ուղուն հետևել է։ 1930-ի մայիսի 1-ին Բահաթյունը Բուդաղյանին գրել է. «... իմ հրաշալի տղան ... ակնհայտ է, որ նա գտել է իր ուղին։ Երեխա ժամանակ նա դրսևորում էր իրեն որպես լուրջ, անկեղծ և համառ կամք ունեցող մեկը»¹⁴։ Իսկ 1934 կամ 1935 թվականի հունվարի 25-ի նամակում Բահաթյունը խոսել է արդեն գրողի դիրքերից. «Արտյուշայի մասին։ Խոստովանում եմ, ես ոչ մի կերպ չէի կարող ենթադրել, որ նրա ձախ գրականությունն այդքան անառարկա է։ Մեծ գրողը պետք է ժամանակի մարգարեն լինի։ Ոչ միայն արտահայտել դարի բոլոր երազանքները, բոլոր ակնկալիքները, այլև իր ետևից տանել։ Անգաղափար գրականությունը դեկադենս է, անկման գրականություն։ Ցանկանում է կուսակցության շարքերն անցնել։ Դա բարերար կազդի գրականության վրա, հստակ աշխարհայացք կձևավորի։ Սակայն, իմ կարծիքով, աշխարհայացքը պետք է լինի կուսակցությունից դուրս, որը կարող է նեղացնել հորիզոնները։ Շատ եմ ցավում, որ զրկված եմ նրան տեսնելու հնարավորությունից»¹⁵։ Ինչպես երևում է սույն մեջբերումից, Ե. Բահաթյունը եղել է գրական որոշակի ճաշակի և համոզմունքների տեր, սակայն իրականում խոր հետք չի թողել հայ թատերագրության մեջ։ Ադամովը տեղյակ է եղել իր տատի գրական գործերից, սակայն չտիրապետելով հայերենին՝ չի կարողացել դրանք։ 1963-ին, Փարիզում հանդիպելով Ռուբեն Չարյանին, հարցրել է.

«Դուք իմ տատին գիտեի՞ք։ Նա էլ թատերագիր էր։ Ի՞նչ էր ազգանունը, մոռացել եմ։ Պատմական պիեսներ էր գրում։

– Եկատերինա Բահաթյուն։

– Այո՛, այո՛։ Հիշում եմ, մի պիես էր գրել հայոց թագավորի կյանքից։

– «Արտավազը»։

– «Արտավազը»։

Կարճ լռությունից հետո.

– Կարծեմ մոռենո՞ւցրել էր։ Ինչպիսի՞ թատերագիր է։

Խուսափեցի հարցին որոշակի պատասխան տալուց, ասացի, թե շատ պիեսներ է գրել, բոլորն էլ պատմական։

– Իսկ ինչպիսի՞ թատերագիր է։

Ասացի, թե նա առաջինն էր, որ հեղափոխությունից հետո պատմական պիեսներ գրեց մեզանում։

– Գրողը տանի, ասացեք, թե ինչպիսի թատերագիր էր։

Խուսափել հնարավոր չէր։

– Միջակ։

¹⁴ ԳԱԹ, Աննա Բուդաղյանի ֆոնդ, № 41–III, 2։

¹⁵ ԳԱԹ, Աննա Բուդաղյանի ֆոնդ, № 42–III, 11։

– Ես այդպես էլ գիտեի:

Գլուխը բռնեց:

– Աստվա՛ծ իմ, ավելի լավ է անհայտ մարդու ժառանգ լինել, քան անուն հանած միջակի»¹⁶:

Նմանապես 1967-ին «Սովետական արվեստ» ամսագրի աշխատակից, կինոգործիչ Նուբար Թիլդյանի հարցին, թե «Ի՞նչ գիտեք Հայաստանի, հայ արվեստի, նրա գործիչների մասին», Ա. Ադամովը պատասխանել է. «Բոլորովին անծանոթ եմ, դժբախտաբար, հայերեն չգիտեմ: Մեծ մայրս, որուն ծածկանունն էր Բահաթուր, գրած է շատ մը թատերախաղեր: Մի հատը միայն կհիշեմ, որուն նյութն էր առասպելական Արտավազդը»¹⁷:

Առնչություններ հայ մտավորականների հետ

Ադամովը, տիրապետելով ոչ միայն բանավոր ռուսերենին, այլև գրավոր, հայ գրականության մասին մի փոքր գաղափար է ունեցել՝ շնորհիվ Վալերի Բրյուսովի՝ հայ պոեզիայից արված ռուսերեն թարգմանությունների:

Աբսուրդի թատրոնի հիմնադիրներից մեկը, չնայած գրեթե կապ չի ունեցել հայ իրականության և ֆրանսահայ համայնքի հետ, սակայն տարբեր առիթներով շփվել է մի քանի հայ մտավորականների հետ¹⁸: Սերտ թղթակցություն է եղել նրա ու Շահան Շահնուրի միջև, Ադամովը գնահատել է վերջինիս ֆրանսերեն ստեղծագործությունները. «Նա լայն ըմբռնումների տեր մի մեծ գրող է, ես հիանում եմ նրա ստեղծած գրականության խորության վրա»¹⁹, – ասել է նա: Մասնավորապես մտերիմներ են եղել Արթուր Ադամովն ու վերոհիշյալ Աննա Բուդաղյանը: Երկուսն էլ ունեցել են նույն արմատները (Շուշի), Բուդաղյանը եղել է Ադամովի մոր մոտիկ ընկերուհին, իսկ Արթուրը մտերիմ է եղել նրա որդու՝ Ֆարադի հետ: Այս մտերմությունը կարող է բացատրվել ոչ միայն բարեկամական կապերով, այլև ստեղծագործական ընդհանուր հետաքրքրություններով: ԳԱԹ-ում պահվող Աննա Բուդաղյանի ֆոնդում կա Արթուր Ադամովի՝ 1950-ին նրան գրած երեք նամակ, թերևս, աղամյանական եզակի մասունքները Հայաստանում: Դրանց բնագրերը և հայերեն թարգմանությունները (որ կատարել է թարգմանչուհի Թագուհի Բլբուլյանը) մենք հրատարակել ենք մամուլում²⁰: Երրորդ նամակում նա մասնավորապես գրել է. «Ես պարտավոր էի Ձեզ գրել, որպեսզի շնորհակալություն հայտնեի ինձ ցուցաբերած Ձեր բարեհաճ վերաբերմունքի համար: Հայերի անունները ինձ շատ պետք եկան, եթե ոչ խմբակին անդամակցելու, ապա գոնե գրքի համար

¹⁶ Ձ ա ղ ա ն. 2012, հ. 3, 332:

¹⁷ Թ ի լ դ յ ա ն. 1967, № 8, 34:

¹⁸ Իր ինքնակենսագրության մեջ Ադամովը հիշել է, որ ծնողների հետ մտերիմ են եղել հայազգի թատերական գործիչներ Փիթոնները (Պիտոեֆներ. տե՛ս Ա դ ա մ ո վ. 2026, 21–22), 1935-ին, երբ Փարիզում ձերբակալվել է, ոստիկանատանը եղել է նաև մի հայ ուսանող՝ «չսավորված, հարվածներից ուռած դեմքով, ամբողջովին կապտուկների մեջ: Ասում են՝ նա Լատինական թաղամասում կոմունիստական թոռիկներ է բաժանել» (Ա դ ա մ ո վ. 2026, 55–56):

¹⁹ Մ խ ի թ ա ռ ե ա ն. 1969, 98:

²⁰ Տե՛ս Բ ա խ չ ի ն յ ա ն. 2005, № Ա, 150–156:

(ես ձեզ կպատմեմ նաև Ղուկասովի հետ ունեցած իմ հանդիպման մասին)»²¹: Չկարողացանք պարզել, թե ի՞նչ խմբակի և գրքի մասին է խոսքը, նաև դժվար է ասել, թե Ղուկասովներից ում է նկատի ունեցել Ադամովը. 1950-ականներին Փարիզում ապրել են «Возрождение» («Վերածնունդ») թերթի հրատարակիչ Աբրամ Ղուկասովը (Արշակ Ղուկասյան, 1872–1969) և արդյունաբերող Ժոզեֆ Ղուկասովը (Հովսեփ Ղուկասյան, 1901–1975):

Ֆրանսահայ գրող Սերովբե Մխիթարյանի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ էլ Ադամովն ասել է. «Խորհրդային կարգերին ու Խորհրդային Հայաստանին հակառակելու համար մարդիկ պետք է հիմար լինեն ու տրամաբանելու անընդունակ, որ չկարողանան մտաբերել այն անվերջանալի կոտորածներն ու ջարդերը, որոնց ենթարկվում էր հայ ժողովուրդը իր սեփական հայրենիքում, և միայն Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումով կարելի եղավ վերջ տալ այդ՝ համաճարակ դարձած հայկական կոտորածներին»²²:

Տակավին 1962-ին Ադամովը ցանկություն է հայտնել, որ իր թատերախաղերից մեկը բեմադրվի Երևանում²³: Ինչպես նշեցինք, Ռուբեն Զարյանը 1963-ին Փարիզում հանդիպել է Ադամովին, այդ հանդիպման մասին գրել «Սովետական արվեստ» ամսագրում, որն էլ հետագայում ընդգրկել է «Մայրամուտից առաջ» հուշագրության երրորդ հատորում²⁴: Ռ. Զարյանը հանդիպման գնացել է փարիզաբնակ բանաստեղծ, նկարիչ Բյուզանդ Թոփալյանի, հանրային գործիչ Աղասի Դարբինյանի և Խորհրդային հյուպատոսարանի ռուս աշխատակցուհու (իմա՝ ՊԱԿ-ի գործակալի) հետ: Ադամովը եկել է ուշացած և ասել, որ ընդամենը կես ժամ ունի: Ռ. Զարյանը նրան հիշել է այսպիսին. «Խոշոր, կարելի է ասել կոշտ, առնականություն և ուժ արտահայտող դիմագծեր: Շարժումը՝ եռանդուն, ձայնը՝ աշխույժ: Հանգիստ պահը գրեթե ծանոթ չէ նրան: Երբ մի բան է ուզում ասել, օգնության են հասնում ձեռքերը: Զարմանալի անմիջական՝ պահում է իրեն այնպես, ինչպես թելադրում է այդ պահի ապրումը: Անկեղծ դրսևորումների սովոր՝ չի թաքցնում զգացածը, չի էլ մտածում, թե ինչ կմտածեն ուրիշները: Կարող է ծիծաղել այնքան բարձր, որ ձայնը բռնի ամբողջ սենյակը: Եթե կամեցավ, կգոռա, կգայրանա: Քաղաքավար սիրալիրությունը, անկախ ներքին ապրումից, անընտել վիճակ է նրա համար: Մարդն այն է դոսից, ինչ կա նրա մեջ այդ պահին: Եվ այդ ծայրահեղ անկեղծությունը զարմանալի հմայք ունի, վարակող ուժ, որ հաղորդվում է դիմացինին, և նա էլ է կամենում այդպես լինել, եթե անգամ այդպիսին չէ իր բնավորությամբ: Այդ ամենի հետ միասին, նրա ընդհանուր բոհեմական նկարագրից դուրս են, միանգամայն անհարիր՝ թախծոտ աչքերը: Մշտական տխրությամբ լի զարմանալի աչքեր են, որ նայում են քեզ ներսից և ասում, թե այս մարդու հոգու խորքում մութ, չվերհանված էջերը շատ են»²⁵:

²¹ Բ ա խ չ ի ն յ ա ն. 2005, № Ա, 156:

²² Մ խ ի թ ա ր ե ա ն. 1969, 101–102:

²³ Տ ե՛ս Ն ե ր ս ի ս յ ա ն. 1962, № 10, 47:

²⁴ Զ ա ր յ ա ն. 2012, հ. 3, 328–334:

²⁵ Զ ա ր յ ա ն. 2012, հ. 3, 329–330:

Ադամովը Ջարյանի հետ խոսել է ռուսերեն («թեև սխալներով առատ, բայց իր միտքը բավական ազատ արտահայտում է ռուսերենով»²⁶), քանի որ, ինչպես ասել է, «Ես հայերեն չեմ խոսում, դժբախտաբար, ոչ էլ կարդում եմ»: Նրա համար հաճելի անակնկալ է եղել ստանալ «Սովետական արվեստ»-ի այն համարը, որտեղ ընդգրկված էր Լ. Ներսիսյանի հոդվածն իր մասին: Երբ Ջարյանը հայտնել է, որ հայ թատրոնի անվանի գործիչ Վարդան Աճեմյանը մտադիր է բեմադրել նրանից որևէ պիես, հավանաբար՝ «Յոթանասունմեկի գարունը», Ադամովը շատ է ուրախացել և հարցրել է, թե դա ե՞րբ կլինի, միգուցե հաջորդ տարի, նրան պատասխանել են, որ 1964-ին թատրոնը լրիվ զբաղված կլինի Շեքսպիրով: Այնժամ Ադամովը կատակել է. «Շեքսպիրի պատճառով կարելի է ամեն ինչ հետաձգել: Նույնիսկ իմ պիեսը»²⁷: Ջարյանը հետաքրքրվել է, թե ինչ կարծիքի է ամերիկյան գրող Վիլյամ Սարոյանի մասին, որի «Իմ սիրտը լեռներում է» թատերախաղը բեմադրել է Վարդան Աճեմյանը: «Սուտ կլինի, եթե ասեմ, որ նրա գրչի տակից դուրս եկող ամեն տող հավանում եմ: Չէ, ինչո՞ւ չասել: Բայց այդ պիեսը շատ եմ հավանում: Պաշտում եմ»²⁸:

Երբ Ջարյանը հիշեցրել է, որ իրենց հանդիպման կես ժամը լրացել է, Ադամովն ասել է. «Կզանգահարեմ և կասեմ, որ մի փոքր ուշանում եմ: Ես ինձ վաղուց այսքան լավ չեմ զգացել», և հավելել. «Եթե բեմադրեք՝ կգամ Երևան: Լավ առիթ է: Վերջապես կտեսնեմ:

Մի փոքր անց.

– Օ'հ, ի՞նչ լավ կլինի, Հայաստանը չեմ տեսել:

Ադասի Դարբինյանն ասաց, թե վերջին անգամ Հայաստանում եղած ժամանակ հանդիպել է այն քահանային, որ մկրտել է Ադամովին:

– Ճի՞շտ:

Ձգացվեց, քիչ էր մնում լաց լինի: Գլուխը բռնեց և բավական ժամանակ լուռ մնաց»²⁹:

Այս գրույցի ընթացքում Բյուզանդ. Թոփալյանը ստեղծել է Ադամովի ճեպանկարը և նվիրել է գրողին: Ադամովն էլ իր հերթին Ջարյանին է նվիրել այդ ճեպանկարը և իր «Յոթանասունմեկի գարունը» պիեսի հրատարակությունը՝ ընծայագրով, որն ավարտվում է այսպես. «Կեցցե՛ Փարիզի կոմունան ... և Երևանը»³⁰: Իսկ հրաժեշտ տալիս ասել է. «Ես վշտանում եմ, որ հայերն ինձ հիշում են այն պատճառով, որ հայ եմ:

Ես ճշտում արի, որ նախ հիշում են այն բանի համար, որ նա լավ թատերագիր է, ճանաչված նաև Փրանսիայից (Ֆրանսիայից – Ա. Բ.) դուրս, նաև մեզ մոտ, Հայաստանում: Եվ հետո մենք հպարտ ենք, որ այդ լավ թատերագիրը մեր հայրենակիցն է:

Դեմքի կոշտ գծերը կորան բարի ժպիտի մեջ:

²⁶ Ջ ա ր յ ա ն. 2012, հ. 3, 329:

²⁷ Ջ ա ր յ ա ն. 2012, հ. 3, 331:

²⁸ Ջ ա ր յ ա ն. 2012, հ. 3, 331:

²⁹ Ջ ա ր յ ա ն. 2012, հ. 3, 333:

³⁰ Ջ ա ր յ ա ն. 2012, հ. 3, 334:

Ասացի, թե հենց որ վերադառնամ Երևան, իրեն ճանաչողների առաջին հարցերից մեկը լինելու է՝ տեսա՞ր Ադամովին, ի՞նչ է գրում հիմա»³¹:

Զարյանից հետո, ինչպես նշվեց, Ադամովին չորս տարի անց հանդիպել է նաև «Սովետական արվեստ» ամսագրի սփյուռքահայ աշխատակից Նուբար Թիլդյանը, որի հետ ունեցած հարցազրույցում թատերագիրն ասել է, որ ԽՍՀՄ գրողների միությունն իրեն հրավիրել է Խորհրդային Միություն, նաև՝ Հայաստան, սակայն հիվանդության պատճառով չի մեկնել³²: Եվ հայաստանցի ընթերցողներին նա թողել է հետևյալ ընծայագիրը. «Արվեստ» ամսագրին՝ շատ բարեկամաբար մի հայրենակցից և մի ֆրանսիացի գրողից: Եվ, անշուշտ, կեցցե՜ միջազգային սոցիալիզմը»³³:

Ռ. Զարյանը հիշել է, որ իրենց հրաժեշտ տալով՝ Ադամովը կրկին պինդ սեղմել է իր ձեռքը և ասել. «Մի՛ մոռացեք ինձ»³⁴:

Իրականում հայերը չեն մոռանում իրենց ականավոր հայրենակցին: Հետագա տասնամյակին, տակավին խորհրդային ժամանակ, հայերեն թարգմանությամբ լույս տեսան նրա «Պրոֆեսոր Տարանը» (թարգմանիչ՝ Վարուժան Նալբանդյան)³⁵, ապա՝ «Պինգ-Պոնգ» (թարգմանիչ՝ Վարուժան Նալբանդյան)³⁶ և «Աղբակերը» (թարգմանիչ՝ Շահե Համամջյան. սա նույն «Թափթփուկների քաղաքականությունը» պիեսն է)³⁷: Մեր օրերում հայ թատրոնում կատարվեցին առաջին ադամյանական բեմականացված ընթերցումները, իսկ Սաթե Խաչատրյանի թարգմանությամբ առանձին հատորներով լույս տեսան Ադամովի «Պիեսները» (2017)³⁸ ու «Մարդը և երեխան» (2026):

Եվ այն, որ հայությունը չի մոռանում իր արժանավոր որդուն, վկայում է 2026-ի մարտին ֆրանսիական «Սաթե-Աթըր» թատերական միության նախաձեռնած Ադամովական օրերը Երևանում և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ կազմակերպած «Արթուր Ադամով. ինքնություն, աքսոր և թատերական արդիականություն» գիտաժողովը:

Եզրակացություն

Ֆրանսիացի գրող, աբսուրդի թատրոնի համահիմնադիր Արթուր Ադամովի հայկական ծագումը, ի տարբերություն այլ օտարալեզու հայազգի գրողների, ոչ մի կերպ չի արտացոլվել նրա գրականության մեջ՝ ողջ կյանքը հայությունից հեռու

³¹ Զ ա ղ յ ա ն. 2012, հ. 3, 334:

³² Թ ի լ դ յ ա ն. 1967, № 8, 34:

³³ Թ ի լ դ յ ա ն. 1967, № 8, 33: Ի դեպ, 1968 թվականին Փարիզ այցելած Սիլվա Կապուտիկյանը և Վարդուհի Վարդերեսյանը հանդիպել են մի շարք հայազգի արվեստագետների և մտավորականների հետ, սակայն «Չհանդիպեցինք և Շարլ Ազնավուրին, Ադամովին: Նրանք նույնպես քաղաքում չէին» (Վ ա ղ յ ա ն. 2003, 189):

³⁴ Զ ա ղ յ ա ն. 2012, հ. 3, 334:

³⁵ Տե՛ս XX դարի արտասահմանյան դրամատուրգիա, 1983, 258–279:

³⁶ Տե՛ս Օտարալեզու հայ գրողներ. 1989, 549–633:

³⁷ Տե՛ս Օտարալեզու հայ գրողներ. 1989, 634–673:

³⁸ Տե՛ս Ա դ ա մ ո վ. 2017:

լինելու և ազգային մշակույթին անհաղորդ լինելու պատճառով: Սակայն իր «Մարդը և երեխան» ինքնակենսագրական հատորում նա մի քանի անգամ հիշել է հայերին ու հայկականը: Ջտարյուն հայ, հայ թատերագրի թոռ, մանուկ ժամանակ հայախոս ու հայկական եկեղեցում մկրտված լինելու հանգամանքները և առանձին հայերի հետ ունեցած առնչություններն Ադամովի մեջ, ռուսականից և ֆրանսիականից բացի, ձևավորել է նաև հայկական ինքնություն, թեկուզև՝ թույլ արտահայտված: Անձնական ծանոթություններն ու կապերը մի շարք հայ մտավորականների և արվեստագետների հետ նպաստել են, որ Ադամովը ժամանակ առ ժամանակ բարձրաձայնի իր հայկական առնչությունները և արտահայտի կարծիք հայ իրականության տարբեր կողմերի վերաբերյալ, անկեղծ ցանկություն հայտնի՝ Հայաստան այցելելու և իր գործերից հայ թատրոնում բեմադրված տեսնելու:

Արծվի Բախչինյան – ք. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփյուռքի և հայկական գաղթաբնակների պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ գաղթավայրեր և Սփյուռք, հայ մշակույթի պատմություն, հայազգի համաշխարհային նշանավոր գործիչներ: Հեղինակ է 15 մենագրության և 100-ից ավելի հոդվածի:

ORCID: 0000-0001-8637-6946. artsvi@yahoo.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադամով Ա. 2017, Պիեսներ, Երևան, «Զանգակ» հրատ., 480 էջ [Adamov A. 2017, Plays. Yerevan, “Zangak” Publishing House, 480 p. (in Armenian)]:

Ադամով Ա. 2026, Մարդը և երեխան, Երևան, «Ալեֆ» հրատ., 240 էջ [Adamov A. 2026, The Man and the Child. Yerevan, “Aleph” Publishing House, 240 p. (in Armenian)]:

Բախչինյան Ա. 2005, Արթուր Ադամովի նամակներն Աննա Բուդաղյանին. – «Գրականագիտական հանդես» (Երևան), № Ա, էջ 150–156 [Bakhchinyan A. 2005, Arthur Adamov's Letters to Anna Budaghyan. “Grakanagitakan handes” (Yerevan), № 1, pp. 150–156 (in Armenian)]:

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Աննա Բուդաղյանի ֆոնդ, թիվ 41-III, 42-III [Museum of Literature and Arts after Yeghishe Charents, Anna Budaghyan's files, № 41-III, 42-III (in Armenian)]:

Ջարյան Ռ. 2012, Մայրամուտից առաջ, հ. 3, Երևան, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, 528 էջ [Zaryan R. 2012, Before Sunset. V. 3, Yerevan, Institute of Arts of NAS RA, 528 p. (in Armenian)]:

Թիլդյան Ն. 1967, Արթուր Ադամովի հետ. – «Սովետական արվեստ» (Երևան), № 8, էջ 32–34 [Tildyan N. 1967, With Arthur Adamov. – “Sovetakan arvest” (Yerevan), № 8, pp. 32–34 (in Armenian)]:

Թյուրաբյան Պ. 1983, Աբսուրդի թատրոն. – «Գարուն» (Երևան), № 3, էջ 74–76 [Tyurabyan P. 1983, Theatre of the Absurd. – “Garun” (Yerevan), № 3, pp. 74–76 (in Armenian)]:

Իսահակյան Ա. 1979, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 6, Երևան, «Սովետական գրող» հրատ., 431 էջ [Isahakyan A. 1979, Collected Works in six volumes. V. 6. Yerevan, "Sovetakan grogh" Publishing House, 431 p. (in Armenian)]:

Իսահակյան Վ. 2000, Հայրս, Երևան, «Գիտություն» հրատ., 590 էջ [Isahakyan V. 2000, My Father. Yerevan, "Gitutyun" Publishing House, 590 p. (in Armenian)]:

Մխիթարեան Ս. 1969, Ֆրանսերէնով արտայայտուող հայ արուեստագէտներ, Փարիզ, «Պահրի Եղբարց» հրատ., 456 էջ [Mkhitaryan S. 1969, Armenian artists expressing themselves in French. Paris, "Pahri Yeghbarts" Publishing House, 456 p. (in Armenian)]:

Ներսիսյան Լ. 1962, Արթուր Ադամովի մի փորձը. – «Սովետական արվեստ», № 10, էջ 46–48 [Nersisyan L. 1962, An attempt by Arthur Adamov. – "Sovetakan arvest", № 10, pp. 46–48 (in Armenian)]:

Վարդերեսյան Վ. 2003, Իմ կյանքի հեքիաթը, Երևան, «Մաշտոց» հրատ., 272 էջ [Varderesyan V. 2003, The fairy tale of my life. Yerevan, "Mashtots" Publishing House, 272 p. (in Armenian)]:

Օտարալեզու հայ գրողներ. 1989. – Կազմ. և ծանոթագր.՝ Ալեքսանդր Թոփչյան, Երևան, ԵՊՀ հրատ., 674 էջ [Topchyan A. 1989, Armenian writers writing in foreign languages. – Compiled and annotated by Aleksandr Topchyan, Yerevan, YSU Publishing House, 674 p. (in Armenian)]:

XX դարի արտասահմանյան դրամատուրգիա. 1983. – Կազմ., թարգմ. և ծանոթագր.՝ Ս. Ե. Փանոսյան, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 551 էջ [Panosyan S. 1983, Foreign drama art of the 20th Century. – Compiled, translated and annotated by S. E. Panosyan, V. 1, Yerevan, YSU Publishing House, 551 p. (in Armenian)]:

АРТУР АДАМОВ И АРМЯНСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ

ԱՐՇՎԻ ԲԱԽՇԻՆՅԱՆ

Резюме

Ключевые слова: Артур Адамов, французская литература и театр, Екатерина Баатур, русско-армянские эмигранты во Франции, Анна Будагян, Рубен Зарян.

Французский писатель Артур Адамов (Арутюн Адамян, 1908–1970) является одним из основателей театра абсурда, знаковым представителем французского послевоенного театра, драматургом-новатором, создавшим новый театральный язык. Родившись в Кисловодске (Россия), он с детства жил в Европе, однако несмотря на это Адамов был связан с армянской средой. Являясь этническим армянином, он был крещен в Армянской апостольской церкви, его родным языком был армянский, бабушка, Екатерина Баатур, была первой армянской женщиной-драматургом. Во Франции Адамов общался с армянами, показывал свои первые литературные опыты известному армянскому поэту

